

**ԽԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՐԻՆՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌԻ ԶԵՎԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՏԵՐԵՆՈՒՄ**

Ս. Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Թատրոնը Հայաստանում դարերի պատմություն ունի: Թատերական արվեստի նախատիպեր են համարվում հնագույն կրոնապաշտամունքային խաղերը: Ու արարողությունները, երգային-վիպական բանահյուսության տարբերը:

Հայերեն գրերի գյուտից հետո սկսվում է գիտական տերմինաբանության կազմավորումը: Թարգմանվում են քերականների, ճարտասանների, փիլիսոփաների բազմաթիվ արժեքավոր երկեր: Հատկապես հունարենի նմանողությամբ անհրաժեշտ նորամուծություններ են կատարում հունաբան դպրոցի ներկայացուցիչները: Միաժամանակ հայ թարգմանիչներն ու պատմիչները ստեղծում են ինքնուրույն գործեր ու մեկնություններ: V դ. սկիզբ դրված ինքնուրույն ու թարգմանական գրականության ստեղծումը հող է նախապատրաստում տարբեր գիտությունների տերմինահամակարգերի առաջացման ու հարստացման համար:

Գիտության, տեխնիկայի, արվեստի զարգացումն իր հետ բերում է նոր հասկացություններ, որոնք արտահայտվում են համապատասխան տերմիններով ու անվանումներով: Գիտատեխնիկական առաջընթացը համընթանում է նոր գիտակարգերի առաջացմամբ ու տարանջատմամբ, միջգիտությունների ստեղծմամբ: Ըստ այսմ, ձևավորվում են նոր գիտաճյուղերի տերմինահամակարգեր, միջհամակարգային տերմիններ: Տերմինները որոշակի գիտահամակարգերի անդամներ են և կապված են տվյալ համակարգի մի շարք այլ տերմինների հետ: Կարգավորված տերմինահամակարգում յուրաքանչյուր հասկացության պետք է համապատասխանի մեկ տերմին: Խոսքում, կրկնաբանություններից խուսափելու նպատակով, մեկ հասկացությանը զուգահեռաբար տրվում են տարբեր անվանումներ:

Լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում երևան են գալիս այս կամ այն պատճառով առաջացած զուգահեռներ կամ տարբերակներ: Տարբերականությունը հատուկ է բոլոր լեզուներին և զարգացման տարբեր շրջաններում կարող է տարբեր չափերի հասնել: Սովորաբար զուգահեռ ձևերի գործածությունն ավելի շատ է տերմինահամակարգերի ստեղծման ու կազմավորման սկզբնական շրջանում:

Զուգահեռ գործածություն ունեցող թատերական տերմինները կարելի է խմբավորել՝ 1) թատերական տերմին-տարբերակների և 2) թատերական համանիշ տերմինների:

1) Թատերական տերմին-տարբերակները նույնական են իրենց իմաստով, տարբերվում են միմյանցից հնչյունակազմով, բառակազմական հատկանիշներով:

Կարելի է առանձնացնել թատերական տերմին-տարբերակների մի քանի տեսակներ՝

ա) բարդ տերմինի բաղադրիչների դիրքային տարբերակներ, ինչպես օրինակ՝ առաջարեմ-բեմառաջ(f)

բ) հավելադրական տերմին-տարբերակներ, երբ մի տարբերակի իմաստը նույնանում է երկրորդի իմաստի հետ, օրինակ՝ դեռ-դեռախաղ, խաղ-թատերախաղ

գ) մեկ ընդհանուր արմատով և տարբեր իմաստներ արտահայտող վերջածանցներով կազմված տարբերակներ, օրինակ՝ աբաբ-աբաբված, դեռա-

բաշխում-լեռնաբաշխություն, թատերական-թատերային, թատերախոսական-թատերախոսություն, թատերգակ-թատերգու և այլն

դ) բարդ բառ-տերմինով և նույնի-ություն վերջածանցով հակադրվող համադրական բարդություններ, այսպես՝ եղերերգ-եղերերգություն, թատերգ-թատերգություն:

Իհրված օրինակներում թատերական տերմին-տարբերակները հայոց լեզվի հնչյունաբանական, բառակազմական նորմի տեսակետից ճիշտ են, թե դրանցից ո՞րը կդառնա կանոնական¹, պայմանավորված է դրանց դործածության հետագա ընթացքով:

Թատերական տերմինահամակարգում զուգահեռ գործածվող տերմինների մի առանձին խումբ են հերկայացնում համանիշ տերմինները՝ ինչպես 'Ի. Լոտեի է նշում, «Պետք է տարբերակել տերմինային «բացարձակ համանիշ» և «հարաբերական համանիշ» հասկացությունները»²:

ա) Բացարձակ համանիշները կամ նույնանիշները³ նույնական են բովանդակության պլանում, չեն տարբերվում ոճական ու կիրառական հատկանիշներով: Թատերական տերմինահամակարգում բացարձակ համանիշներն արագ են փոփոխության ենթարկվում, հաղթում է շարքի անդամներից մեկը, մյուսը կամ մյուսները տերմինացվում են կամ ստանում այլ իմաստ, «նշանակության նուրբ տարբերություններ են ստանում, որով և վերանում է նույնանիշների ավելորդ բեռը»⁴:

Թատերական բացարձակ համանշային շարքեր կարելի է դիտել՝ անձնավորում-մարմնավորում, արար-գործողություն, բեմադր-նախաբեմ-առաջաբեմ, բեմադրել-բեմականացնել-բեմադրել, բեմադրություն-ներկայացում, խեղկատակ-ծաղրածու, հանդիսատես- փառատուն, մարդաշատ տեսարան-բազմամարդ տեսարան և այլն:

բ) Տերմինային համանիշները պետք է տարբերակել համագործածական բառերի համանշությունից: Համընդհանուր բառապաշարում համանիշները միևնույն հասկացությունն անվանում են տարբեր ձևերով և միմյանցից տարբերվում են իմաստային զանազան նրբերանգներով, ոճական կիրառությամբ: Իսկ իմաստային նրբերանգները, ոճական տարբեր կիրառությունները հակասում են տերմինաշինության պահանջներին: Այնուամենայնիվ, տերմինային համանիշների որոշակի տարբերություններ կան՝ կապված նրանց տարածական, սոցիոլոգիական, ժամանակագրական, կառուցվածքային⁵ հատկանիշների հետ:

1. Տարածական հատկանիշով տարբերվող համանիշ թատերական տերմիններից մեկը գործածվում է արևելահայերենում, մյուսը՝ արևմտահայերենում, ինչպես օրինակ՝ թատերական երկ (պիես) — թատերակ (արևմտահայերեն), չափածո թատերական երկ — թատերաֆերթված (արևմտահայերեն):

2. Ժամանակագրական հատկանիշով տարբերվող հայերեն թատերական տերմինները կերտված են տարբեր ժամանակներում: Սրանք երկանդամ համանշային շարքեր են, որոնց անդամներից մեկը գործածվել է հայ թատե-

¹ Եկանոնականությունը որոշվում է բառագործածության նորմի չափանիշով, այսինքն՝ տվյալ տարբերակն ընդունված է, սովորական գործածություն ունի, հետևաբար և համապատասխանում է լեզվական այժմյան նորմին, իսկ մյուսը կամ մյուսները սակավ գործածություն են, սովորական չեն կամ նույնիսկ հանձնարարելի էլ չեն» (Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 158):

² Է. Լոտե, Основы построения научно-технической терминологии, М., 1961, с. 22.

³ Երբեմն միևնույն տերմինահամակարգին պատկանող նույնանիշները կոչվում են բազմանուններ (Չ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987):

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 159:

⁵ Ի. Շալունց, Տերմինային համանշություն և բազմիմաստություն (Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1984, էջ 160):

րտկան արվեստի զարգացման տարբեր շրջաններում՝ հին, միջնադարյան, նախախորհրդային, իսկ մյուսը կիրառվում է ժամանակակից հայերենում, օրինակ՝ նոխագերգություն-ողբերգություն, տրամախոսություն-երկխոսություն, խաղարկություն-ներկայացում, թելադիր-հուշարար և այլն:

3. Հասարակական հատկանիշով հակադրվող թատերական տերմինները հարաբերականորեն կարելի է անվանել համանիշներ, օրինակ՝ թատրոն-Մեյ-լյանսի տաճար, բեմադրել-խաղալ, կատակերգակ-կոմիկ:

Բերված օրինակներում զույգերի առաջին անդամները թատերական տերմինահամակարգին են պատկանում, իսկ մյուսները՝ տարբեր շերտերի՝ Մեյլյանսի տաճարը գործածվում է, այսպես կոչված, բանաստեղծական մասնաշերտում, իսկ խաղալ, կոմիկ բառերն անցել են շեղոք կամ համազործական բառերի շերտին:

4. Կառուցվածքային հատկանիշով հակադրվող համանիշ տերմինները կարելի է դասակարգել՝

ա) կապակցական երկանդամ տերմինով (որն արտահայտում է որոշիչ-որոշյալի կամ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն) և նրա բաղադրիչներից կազմված համադրական բարդություններ, որոնցում տերմինաբաղադրիչների իմաստների փոփոխություն չկա, օրինակ՝ բեմական արվեստ-բեմարվեստ, դերերի շարք-դերաշարք, թատերական արվեստ-թատերարվեստ, թատերական գրականություն-թատերագրություն և այլն,

բ) համանիշային զույգեր, երբ մի անդամը կապակցական տերմին է, իսկ մյուսը՝ նրա անվանական բաղադրիչը, ինչպես օրինակ՝

զեղարվեց տաճարն ասմունք—ասմունք

դերասանական անձնավորում—անձնավորում

բեմական գործողություն—գործողություն

Բերված օրինակներում թեև կապակցական տերմինների որոշիչ բաղադրիչների մասնակցությամբ հասկացությունն ավելի ճշգրիտ ու որոշակի է բառում, սակայն անհամապատասխանությունն չի առաջանում դրանց և համապատասխան կարճ ձևերի միջև: Տերմինների կարճ ձևերը նախընտրելի են (քանի որ բավարարում են տերմինին ներկայացվող պահանջներից մեկին՝ ևս՝ կարճությամբ), պայմանով, որ համատեքստում թյուրըմբռնումներ տեղիք չտան:

Թատերական տերմինների համանշային շարքեր առաջանում են օտար լեզուներից փոխառվալ տերմիններով և դրանք հայերեն համառոտեցնելով: Փոխառվալ որոշ տերմինների հետ, կամ որոշ ժամանակ անց, բեմադրվում են դրանց հայերեն համարժեքները: Օտար և ազգային ձևերի զուգահեռ գործածությունը ժամանակավոր բնույթ է կրում, որը կարող է ավարտվել կամ փոխառվալ, կամ սեփական տերմինի հաղթանակով: Սովորաբար հաղթում են հայերեն համարժեքները, իսկ օտար տերմինը պահպանվում է, երբ հայերեն համանշանակն իմաստային տեսակետից բավարար չափով ճշգրտված չէ, երկար է ու անբարեհունչ:

Ժամանակագրական տեսակետից փոխառվալ թատերական տերմինները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ հին շրջանից եկող և նոր ժամանակներում կատարված:

ա) Հայկական թատրոնի վրա մեծ ազդեցություն է ունեցել հունական թատրոնը: Շատ թատերական տերմիններ փոխառություններ կամ պատճենումներ են՝ կատարված հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, «Հունաբան դպրոցը խոշոր դեր կատարելով հայ գիտա-միլիտարիստիկական տերմինաբանության համար, ունեցավ և ծայրահեղություններ, որոնք արտահայտվեցին որոշ ավելորդ տերմիններ, բազմաթիվ քերականական արհեստական ձևեր ստեղծելու և երբեմն հունարենին կուրորեն նմանվելու մեջ: Սակայն, սա միայն արտաքին կեղևն է, որի տակ

լի կարելի չտեսնել այդ դպրոցի ներկայացուցիչների ջանքերը հայ ինքնուրույն կուլտուրա ստեղծելու ուղղությամբ⁷։

Հին շրջանում կատարված փոխառություններով (հատկապես հունարենից) և գրաբարյան ձևերով կազմված են թատերական տերմինների երկանդամ, եռանդամ համանշալին շարքեր, ինչպես օրինակ՝ ամֆիթատրոն-շուրջ-տեսանելիք, միմոս-ծաղրածու-խեղկատակ (խեղակատակ)։

բ) Շատ են նոր փոխառություններով և ժամանակակից հայերենում գործածվող թատերական տերմիններով կազմված համանշալին շարքերը։ Նոր փոխառությունները ռուսերենից կամ եվրոպական լեզուներից անցած բառեր ու բառակապակցություններ են։

Օտար և հայերեն զուգահեռաբար գործածվող համանշալին շարքեր են՝ անսամբլ-համախաղ, իմպրովիզացիա-ստեղծաբանություն, պրեմիերա-առաջնախաղ, ռեպերտուար-խաղացանկ, վոդևիլ-զավեշտ և այլն։

Երբեմն օտար տերմինի դիմաց հայերենում ստեղծված մի քանի համարժեքներից հաղթում է օտար ձևը։ Որոշ դեպքերում մայրենի ձևը չի կարող փոխարինել օտար տերմինին՝ բոլոր կիրառություններում, կամ օտարը շատ է արմատացած լեզվում և ավանդականի գորություն ունի։

Բերված օրինակներում անսամբլ, պրեմիերա, վոդևիլ, իմպրովիզացիա տերմիններն ավելի գործածական են, իսկ ռեպերտուար-խաղացանկ զույգի անդամները գործածվում են հավասարապես։

գ) Թատերական տերմինների մեջ որոշակի թիվ են կազմում պատճենումներով (կիսապատճենումներով) և փոխառյալ ձևերով կազմված համանշալին շարքերը։ Պատճենումները լեզվական այն միավորներն են, որ օտար ազդեցությամբ և կառուցվածքի օրինակով վերարտադրում են տվյալ իմաստը՝ մայրենի լեզվի համապատասխան միջոցներով։ Պատճենման ժամանակ ձևերին բառակերպումը հենվում է արտաքին կաղապարների վրա⁸։

Բերենք թատերական տերմինների երկանդամ համանշալին շարքեր, որտեղ մի անդամը փոխառյալ է, մյուսը՝ պատճենված՝ ավանցենա-նախաբեմ, միգանցեն-բեմավիճակ, տրիլոգիա-եռագրություն, կոմեդիա-կատակերգություն, տրագիկոմեդիա-ողբերգատակերգություն և այլն։

Դժվար է պատճենումները սահմանազատել օտար ազդեցությունից անկախ կերպով ստեղծված մայրենի լեզվի նորակազմություններից, որոնց կառուցվածքը կարող է պատահականորեն համընկնել մեկ այլ լեզվի ինչ-որ կաղապարի հետ։ Պատճենումները պահանջում են երկու լեզուների տեղական շփում։ Նրանք մեծ դեր են կատարում տարբեր բնագավառների տերմինա-համակարգերի համալրման գործում։

Լրիվ (իմաստային, կառուցվածքաիմաստային) պատճենումներից բացի լայն տարածում ունեն կիսապատճենումները։ Սրանք այն թատերական տերմիններն են (բարդ և կապակցական), որոնց մի բաղադրիչն օտար է։

Կիսապատճենված թատերական տերմինների համանշալին շարքերը կարելի է բաժանել երկու խմբերի՝

ա) լրիվ պատճենված ազգային ձևով և օտար տերմինի կիսապատճենված ձևերով կազմված շարքեր, որոնք կարող են և՛ վերլուծական, և՛ համադրական բնույթի լինել։ Օրինակներ՝ բեմանադ-դեկորակալ, հյուրախաղային ներկայացում-գաստրոլային ներկայացում, մանրապատկեր ներկայացում-միմիատյուրային ներկայացում, միջանկյալ դեր-էսքիզոդիկ դեր և այլն։

բ) օտար տերմինի կիսապատճենված մի քանի ձևերով կազմված համանշալին շարքեր, ինչպես օրինակ՝ լիթուգիական դրամա-ալատաբալետին դրամա, բեմական կուլտուրա-դերասանական կուլտուրա։

7 Գ. Բ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատանքները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 45։

8 Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի տերմինաբանական հարցերի քննարկում (ՀՍՍՀ 96 կրթության հասարակական գիտությունների, 1971, № 9, էջ 95)։

Թատերական տերմինների համանշանակ շարքերն ըստ բաղադրիչների քանակի բաժանվում են երկանդամ, եռանդամ և բազմանդամ խմբերի:

Ի հակադրություն համագործածական բառերի, որոնց համանշանակ շարքերը հիմնականում բազմանդամ են, թատերական տերմինների համանշանակ շարքերը, մեծ մասամբ երկանդամ և եռանդամ են, և նրանց մեջ հիմնաբար կամ հենաբարդ դժվար է որոշել: Թատերական տերմինների երկանդամ համանշանակ շարքեր՝ բեմադրվեստ-թատերադրվեստ, դեր-խաղ, միջադադար-դեղմիջում, բեմագարդիչ-բեմանկարիչ և այլն: Եռանդամ համանշանակ շարքերի առաջաբեմ-բեմառաջ-նախաբեմ, բեմադրություն-ներկայացում-բեմականացում, բեմագարդ-բեմանկար-դեկոր, երկխոսություն-տրամախոսություն-դիալոգ և այլն: Բազմանդամ համանշանակ շարքեր՝ դրամատուրգ-թատերադիր-թատերագու-թատերգակ, թատերասրահ-հանդիսասրահ-թատերադահլիճ-հանդիսադահլիճ և այլն:

Այսպիսով՝ վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ թատերական տերմինհամակարգում զգալի քանակ են կազմում միեւնույն հասկացությամբ տրվող ղուգահեռ անվանումները: Դրանց մի մասը տարբերակներ են, մի մասն էլ՝ համանշանակ: Թատերական տերմինների համանշանակի առաջացման աղբյուրները բազմազան են. հիմնականը հայոց լեզվի բառային կազմն է (տեղի է ունենում համագործածական բառի տերմինացում, նոր տերմինների կերտում՝ հայերենի բառակազմական օրենքներով, այլ համակարգերից կատարված փոխառություններ և այլն): Մյուս աղբյուրն այլ լեզուներից կատարված փոխառություններն ու պատճենումներն են, այսինքն՝ թատերական տերմինների համանշանակի առաջացումը պայմանավորված է հայերենի բառապաշարի հարստացման ներքին և արտաքին աղբյուրների օրինաչափությամբ:

ПАРАЛЛЕЛЬНЫЕ ФОРМЫ ТЕАТРАЛЬНЫХ ТЕРМИНОВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. В. ПАПИКЯН

Р е з ю м е

В театральной терминологии значительное количество составляют параллельные термины, данные одному и тому же понятию. Часть этих терминов выступает в качестве вариантов, другая — в качестве синонимов.

Истоки возникновения театральных терминов разнообразны. Основной из них — словарный состав армянского языка (происходит терминовое образование общеупотребительных слов, создание новых терминов словообразовательными средствами армянского языка, заимствования из других систем и т. д.).

PARALLEL FORMS OF THEATRICAL TERMS IN MODERN ARMENIAN LANGUAGE

S. V. PAPIKIAN

S u m m a r y

In theatrical terminology parallel terms form a considerable quantity given to the same conception. One part of these terms come forward as versions, the other — as synonyms.

The resources of theatrical terms rise are different. The principal of them is the dictionary structure of the Armenian language (forming of terms of the words of general use, creating of new terms with word-building means of Armenian language, borrowing from other system, etc. take place). Borrowings and tracing-papers are another source of theatrical terms rise.